Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1031-25.11.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «և տեղական ինքնակառավարման», ինչպես նաև «նպատակաուղղված» բառերը.

2. 2-րդ մասի «այն դեպքերի, երբ այդ իրավունքներն օգտագործվում են մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման նպատակով» բառերը փոխարինել «սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. «ապրանքային շուկա» հասկացության «ապրանքային շուկա՝» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ սահմանված՝» բառերով.

2. «ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման» հասկացության «ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման՝» բառերից հետո լրացնել «Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝» բառերով.

3. «ապրանքային շուկայի աշխարհագրական սահման» հասկացության «ապրանքային շուկայի աշխարհագրական սահման՝» բառերից հետո լրացնել «Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝» բառերով.

4. «ձեռքբերում» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերությունով.

«պետական մարմին՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետության կամ համայնքի հիմնարկ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.».

5. «տնտեսվարող սուբյեկտ» հասկացության «ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր)» բառերը փոխարինել «արտոնագրային վճար վճարող, անհատ ձեռնարկատեր» բառերով, իսկ «անձանց խումբ» բառերից հետո լրացնել «առևտրային ցանց» բառերով.

6. «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունում «խումբ» բառից հետո լրացնել «առևտրային ցանց» բառերով, ինչպես նաև լրացնել նոր նախադասությամբ.

«Սույն օրենքով նախատեսված համակենտրոնացման դեպքում տնտեսվարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:».

7. «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերություններով.

«առևտրային օբյեկտ՝ գույքային համալիր (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է իրացման ոլորտում ապրանքները վերջնական սպառողին հասցնելու համար.

առևտրային ցանց՝ երկու կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ, որոնք գտնվում են ընդհանուր կառավարման ներքո կամ գործում են միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո.

տնտեսական պայմաններ (գործոններ)՝ ապրանքի ձեռքբերման, արտադրության, իրացման (ծառայության մատուցման, աշխատանքի կատարման) հետ կապված ծախսեր, հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ.

գնի չհիմնավորված բարձրացում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմանների (գործոնների) առկայությամբ չպայմանավորված բարձրացում:

գնի չհիմնավորված իջեցում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմանների (գործոնների) առկայությամբ չպայմանավորված իջեցում:

գնի չհիմնավորված պահպանում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի պահպանումը (ներառյալ այդ գնի՝ մինչ՝ հինգ տոկոս փոփոխությունը) այն դեպքում, երբ որոշակի տնտեսական պայմանների (գործոնների) առկայությունը կարող էր հանգեցնել կամ պետք է հանգեցներ ավելի ցածր կամ ավելի բարձր գնի սահմանման:».

8. «անձանց խումբ» հասկացությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«անձանց խումբ՝ իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ, որոնք գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, և (կամ) որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինելու (այդ թվում՝ առուվաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարականի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին,

- կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպություններում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինելու (այդ թվում՝ առուվաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարականի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպությունների կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին,

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձը կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ պայմանագրի հիման վրա կամ այլ ձևով հնարավորություն է ստանում կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ,

- կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ պայմանագրի հիման վրա կամ այլ ձևով հնարավորություն է ստանում կանխորոշելու այդ կազմակերպությունների կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպությունների կողմից պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ,

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի առաջարկությամբ ընտրվել կամ նշանակվել է այդ կազմակերպության միանձնյա գործադիր մարմինը և (կամ) կոլեգիալ գործադիր մարմնի կազմի կեսից ավելին և (կամ) ընտրվել է այդ կազմակերպության կառավարման մարմնի կազմի կեսից ավելին,

- կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձի առաջարկությամբ ընտրվել կամ նշանակվել են այդ կազմակերպությունների միանձնյա գործադիր մարմինները և (կամ) կոլեգիալ գործադիր մարմինների կազմերի կեսից ավելին և (կամ) ընտրվել է այդ կազմակերպությունների կառավարման մարմինների կազմերի կեսից ավելին,

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրականացնում է այդ կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի իրավասությունները,

- կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրականացնում է կազմակերպությունների միանձնյա գործադիր մարմինների իրավասությունները,

- կազմակերպությունները, որոնցում կոլեգիալ գործադիր մարմնի անդամների կեսից ավելին միևնույն ֆիզիկական անձինք են,

- ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնց կողմից շահագործվող առևտրային օբյեկտները գտնվում են ընդհանուր կառավարման ներքո կամ գործում են միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո,

- ֆիզիկական անձը, նրա ամուսինը, ծնողը, երեխան, եղբայրը, քույրը,

- ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով անձանց խումբ է կազմում միևնույն անձի հետ, ինչպես նաև այլ անձինք, որոնք սո ւյն մասում նշված հիմքերից որևէ մեկով տվյալ անձանցից որևէ մեկի հետ անձանց խումբ են կազմում,

- կազմակերպությունը, ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձը, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով կազմում են անձանց խումբ, եթե այդ անձինք կազմակերպությունում իրենց մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինելու (այդ թվում՝ առուվաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարականի կամ այլ գործարքների միջոցով) այդ կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին.

-իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց խումբը սույն օրենքի իմաստով անձանց խումբ է համարվում Հանձնաժողովի որոշմամբ.».

9. «վարչական (իրավական) ակտի կամ այլ փաստաթղթի (այսուհետ սույն պարբերությունում՝ թղթակցություն) հանձնում» հասկացությունը լրացնել նոր նախադասությամբ.

«Սույն պարբերությունում նշված վայրի կամ փոստային հասցեով ուղարկված թղթակցությունը համարվում է հասցեատիրոջը պատշաճ հանձնված, եթե հասցեատերը հրաժարվում է

թղթակցությունը ստանալուց կամ թղթակցության ստացումը հավաստող փաստաթուղթը ստորագրելուց կամ հասցեատիրոջ բացակայության պատճառով Հանձնաժողովի կողմից պատվիրված նամակով ուղարկված թղթակցությունն առնվազն երկու անգամ ետ է վերադարձվում:».

10. «փայաբաժին» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերությամբ.

«դիտանցում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից իրացվող կամ ձեռքբերվող ապրանքի գնի, որակի, քանակի, այլ բնութագրերի, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործողությունների կամ վարքագծի բացահայտման նպատակով տնտեսվարող սուբյեկտի գործունեության վայրում, այդ թվում՝ առևտրի օբյեկտում իրականացվող դիտարկում.»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀՈԴՎԱԾ 5. ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՐԳԵԼՈՒՄԸ

1. Սույն օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Հակամրցակցային համաձայնությունները կնքվում (կայացվում) են՝

1) միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների միջև (հորիզոնական համաձայնություն).

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացնող ու ձեռքբերող) տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց համաձայնություն).

3) տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև (խառը համաձայնություն):

3. Հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները վերաբերում են՝

1) շուկան կամ մատակարարման աղբյուրները բաշխելուն կամ բաժանելուն՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի կամ ապրանքի տեսականու կամ իրացնողների կամ ձեռքբերողների խմբերի կամ տարածքային սկզբունքով կամ այլ եղանակով.

2) այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն.

3) ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

4) իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, հավելաճի, արտոնությունների կամ առևտրի այլ պայմանների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանը.

5) արտադրանքի, մատակարարման, տեխնիկական զարգացման կամ արդիականացմնան, ներմուծման, առևտրի կամ ներդրումների սահմանափակմանը կամ վերահսկմանը.

6) ի վնաս սպառողի շահերի ապրանքների ներկրման կամ արտադրության չհիմնավորված կրճատմանը կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասորդի ստեղծմանը կամ պահպանմանը.

7) պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների պայմանների կամ արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը (խեղաթյուրմանը).

8) առանց հիմնավոր պատճառի առևտրային գործունեությունը որևէ տնտեսվարող սուբյեկտի հետ կազմակերպելու պայմանավորվածությանը.

9) միևնույն ապրանք(ներ)ի համար անհավասար պայմանների առաջարկմանը կամ կիրառմանը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը.

10) պայմանագրի կողմին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրմանը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

11) այլ պայմանների, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

4. Ուղղահայաց կամ խառը հակամրցակցային համաձայնությունները վերաբերում են՝

1) ապրանքների իրացման սահմանափակումներին՝ տարածքային, գնային կամ այլ հատկանիշներից ելնելով.

2) ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

3) այլ տնտեսվարող սուբյեկտներից (սուբյեկտներին) ապրանք ձեռք բերելուց կամ իրացնելուց հրաժարվելուն.

4) միևնույն ապրանք(ներ)ի համար անհավասար պայմանների առաջարկմանը կամ կիրառմանը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը.

5) գործարքներում այնպիսի դրույթ(ներ)ի սահմանմանը, որը (որոնք) իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չի (չեն) առնչվում գործարքի բուն առարկայի հետ.

6) այլ պայմանների, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

5. Հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝

1) առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց.

2) այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների՝ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասում նշված գործողությունները կամ վարքագիծը:

6. Հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

7. Հակամրցակցային չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղված են նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին, արտադրության խթանմանը, ապրանքների կատարելագործմանը, ապրանքների արտահանման խթանմանը, նպաստում են սպառողների շահերին:

8. Մինչև համաձայնություն կնքելը (կայացնելը), եզրակացություն ստանալու համար, տնտեսվարող սուբյեկտները կարող են դիմել Հանձնաժողով:»:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀՈԴՎԱԾ 6. ՄԵՆԱՇՆՈՐՀ ԿԱՄ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԸ

1. Սույն օրենքի իմաստով տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռքբերող չունի մրցակից:

2. Տնտեսվարող սուբյեկտը ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող հետևյալ դեպքերում՝

1) եթե տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռքբերող չի հանդիպում էական մրցակցության և (կամ) իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալ տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղել այլ տնտեսվարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտել տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ

2) եթե որպես իրացնող կամ ձեռքբերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

3) եթե ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող կամ ձեռքբերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ

4) եթե ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող կամ ձեռքբերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը գերիշխող դիրք ունեցող է (են) համարվում՝ հաշվի առնելով տվյալ ապրանքային շուկայի կառուցվածքի առանձնահատկությունները՝ այդ շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների բաժինների բաշխվածության վերաբերյալ:

Սույն հոդվածում նշված տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը կարող են ներկայացնել տվյալ ապրանքնային շուկայում իր(ենց) գերիշխող դիրքի առկայությունը բացառող ապացույցներ:

4. Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության որոշման կարգը և չափանիշները սահմանում է Հանձնաժողովը:

5. Առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ:

6. Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հանձնաժողովի որոշմամբ:

7. Մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի լուծարման (գործունեության դադարեցման) համար պարտադիր է Հանձնաժողովի կողմից տրամադրվող տեղեկանքն առ այն, որ Հանձնաժողովը չի առարկում տնտեսվարող սուբյեկտի լուծարմանը (գործունեության դադարեցմանը):»:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի՝

1) «ա» կետից հանել «և (կամ) տարբերակված» բառերը.

2) «ե» կետում «կողմին» բառից հետո լրացնել «կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին» բառերով.

3) «է» կետում «համար» բառից հետո լրացնել «կամ որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը կարող էր մուտք չգործել շուկա կամ դուրս մղվել շուկայից կամ կատարել լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար» բառերով.

4) «թ» կետից հետո լրացնել նոր՝ «ժ» կետով.

«ժ) ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը:».

2. լրացնել նոր 3-րդ մասով.

«3. Բացի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողություններից (վարքագծից), առ¨տրային ցանցի կողմից գերիշխող դիրքի չարաշահում է համարվում նա¨՝

1) պայմանագրի կողմին պայմանների պարտադրումը, որոնք վերաբերում են՝

ա) այլ տնտեսվարող սուբյեկտի հետ պայմանագիր կնքելու արգելքին.

բ) այլ տնտեսվարող սուբյեկտի հետ կնքվող պայմանագր(եր)ի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը.

գ) տնտեսվարող սուբյեկտից լրացուցիչ վճարի գանձմանը կամ այլ պայմանի պարտադրմանը, եթե մատակարարում իրականացվելու է նաև տվյալ առևտրային ցանցի մեջ մտնող նոր առևտրային օբյեկտին.

դ) տնտեսվարող սուբյեկտից լրացուցիչ վճարի գանձմանը կամ այլ պայմանի պարտադրմանը՝ կապված մատակարարվող ապրանք(ներ)ի տեսականու փոփոխության հետ.

ե) մատակարարված և առևտրային ցանցի սեփականությունը համարվող ապրանք(ներ)ի փչացման, վնասվածքի, կորստի կամ ոչնչացման դեպքում տնտեսվարող սուբյեկտի կողմից վնասների փոխհատուցմանը, բացառությամբ այն դեպքի, երբ դա տեղի են ունեցել վերջինիս մեղքով.

զ) տնտեսվարող սուբյեկտի կողմից այն ծախսերի փոխհատուցմանը, որոնք կապված չեն ապրանք(ներ)ի մատակարարման պայմանագրի կատարման կամ ապրանք(ներ)ի հետագա իրացման հետ.

է) այն ապրանք(ներ)ի վերադարձման պարտավորության սահմանմանը, որոնք չեն իրացվել որոշակի ժամանակահատվածի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների վերադարձման պահանջը սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ.

ը) այլ հանգամանքների, որոնք պարունակում են սույն կետում սահմանված պայմանների էական տարրեր:

2) առանց գրավոր պայմանագիր կնքելու մատակարարում իրականացնելուն պարտադրելը:»:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 8. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝

1) տնտեսվարող սուբյեկտների միացումը.

2) տնտեսվարող սուբյեկտների միաձուլումը.

3) տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց արժեքն ինքնին կամ ձեռքբերողին արդեն պատկանող ակտիվների արժեքի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների արժեքի 20 տոկոսը կամ ավելին.

4) տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռքբերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին.

5) տնտեսվարող սուբյեկտների ցանկացած միավորում, որի շնորհիվ մեկ տնտեսվարող սուբյեկտը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա:

2. Միացման մասնակիցներ են համարվում միացման ձևով վերակազմակերպվող տնտեսվարող սուբյեկտները:

3. Միաձուլման մասնակիցներ են համարվում միաձուլվող տնտեսվարող սուբյեկտները:

4. Ակտիվների ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են հանդիսանում ակտիվներ իրացնող և ձեռքբերող տնտեսվարող սուբյեկտները:

5. Փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են հանդիսանում փայաբաժին ձեռքբերող տնտեսվարող սուբյեկտը և այն տնտեսվարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժին է ձեռք բերվում:

6. Միավորման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են հանդիսանում միավորվող տնտեսվարող սուբյեկտները:

7. Սույն օրենքի իմաստով համակենտրոնացումը կայացվում է՝

1) միևնույն ապրանքային շուկայում գործող (մրցակից հանդիսացող) տնտեսվարող սուբյեկտների միջև (հորիզոնական համակենտրոնացում).

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացնող ու ձեռքբերող) տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց համակենտրոնացում):

3) տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև (խառը համակենտրոնացում):»:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 9. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ

1. Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝

1) համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը).

2) համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք:

2. Համակենտրոնացման հայտարարագրում նշվում է համակենտրոնացման ձևը, նպատակը և մասնակիցներից յուրաքանչյուրի մասին հետևյալ տեղեկատվությունը՝

1) անունը (անվանումը), բնակվելու (գտնվելու) և գործունեության վայրը.

2) գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ հայտարարագրման նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ, իսկ օրենքով սահմանված՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պարտադիր անցկացման պահանջի առկայության դեպքում՝ նաև դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Եթե համակենտրոնացման մասնակիցներից որևէ մեկը գործունեությունը սկսել է տվյալ տարում, ապա նրա ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը ներկայացվում են հայտարարագրման նախորդ ամսվա վերջի դրությամբ.

3) նախորդ տարվա ընթացքում իրացրած ապրանքների ծավալներն ըստ տեսակների, ինչպես նաև արտադրական կարողությունների նկարագիրը.

4) Հանձնաժողովի՝ համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը հաստատելու մասին որոշմամբ սահմանված այլ փաստաթղթեր և տեղեկատվություն:

3. Համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը սահմանում է Հանձնաժողովը:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. Ուժը կորցրած ճանաչել 1-ին մասը,

2. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Հայտարարագրման ենթակա կամ տնտեսական մրցակցությունն էապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումը թույլատրվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա, որը կարող է պարունակել նաև համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) համար պարտադիր կատարման ենթակա պայմաններ և պարտավորություններ:»:

3. 3-րդ մասից հանել «կամ գերիշխող դիրքի հանգեցնող», ինչպես նաև «կամ համակենտրոնացմանը մասնակցելը» բառերը:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի իմաստով շփոթության առաջացում է համարվում՝

1) գրանցված ապրանքային կամ սպասարկման նշանին կամ արդյունաբերական նմուշին շփոթության աստիճան նման չգրանցված ապրանքային կամ սպասարկման նշանի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումը.

2) առավել վաղ օգտագործվող չգրանցված ապրանքային կամ սպասարկման նշանին կամ արդյունաբերական նմուշին շփոթության աստիճան նման չգրանցված ապրանքային կամ սպասարկման նշանի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումը.

3) գրանցված ապրանքային կամ սպասարկման նշանին կամ արդյունաբերական նմուշին նույնական ապրանքային կամ սպասարկման նշանի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումն առանց իրավատիրոջ համաձայնության.

4) ֆիրմային անվանմանը շփոթության աստիճան նման ֆիրմային անվանման օգտագործումը կամ ֆիրմային անվանման ապօրինի օգտագործումը.

5) ապրանքի արտաքին տեսքի, օրինակ՝ ապրանքի փաթեթավորման, գույնի կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությունները կամ վարքագիծը.

6) քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, անհատականացման այլ միջոցների, օրինակ՝ գործարարության խորհրդանիշի, բառեր փոխարինող նշանների կամ տառերի, կարգախոսների նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությունները կամ վարքագիծը.

7) ապրանքների ներկայացման ձևերի, այդ թվում՝ գովազդի, ծառայողական հագուստի, ապրանքների մատուցման ոճի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությունները կամ վարքագիծը.

8) հռչակավոր մարդկանց, գրականության, արվեստի կամ սպորտի հանրաճանաչ գործիչների, հանրաճանաչ այլ անձանց անունների, այլ տվյալների, պատկերների օգտագործումը, ստեղծագործությունների, դրանց անվանումների, տեքստերի կամ պատկերների ամբողջական կամ մասնակի արտատպումը, պատճենումը կամ այլ կերպ օգտագործումը՝ առանց համապատասխան համաձայնության (թույլտվության):

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Հասարակության մոլորեցում է համարվում նաև ապրանքի արտադրության կամ պահպանման ժամկետի, տվյալ ապրանքը արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ հասցեի, կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ նշումների բացակայությունը կամ օրենքին հակասող նշումների առկայությունը կամ գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել գովազդվող ապրանքի վերաբերյալ կամ օրենքին հակասող գովազդը:»:

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 5.1-րդ գլխի վերնագրում «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ» բառից հետո լրացնել «, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի «կառավարության, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, պետական կամ պետական մասնակցությամբ կազմակերպությամբ» բառերը փոխարինել «պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 13. Օրենքի 16.2-րդ հոդվածի՝

1. 1-ին պարբերությունից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության,», ինչպես նաև «և տեղական ինքնակառավարման» բառերը.

2. 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ.

«Եթե պետական մարմինը համաձայն չէ իրավական ակտի վերաբերյալ Հանձնաժողովի փորձագիտական եզրակացության հետ, իսկ Հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ իրավական ակտը, հնարավոր է, բացասաբար անդրադառնա որևէ ապրանքային շուկայում տնտեսական մրցակցության վրա, ապա իրավական ակտի ընդունումը նախաձեռնող մարմինը պարտավոր է համապատասխան իրավական ակտն ընդունող մարմնին ներկայացնել նաև իր դիրքորոշման հիմնավորումը:»:

ՀՈԴՎԱԾ 14. Օրենքը լրացնել նոր՝ 16.3-րդ հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 16.3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՈՒՄԸ

1. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք սահմանափակում, կանխում կամ արգելում են տնտեսական մրցակցությունը, արգելվում են:

2. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ տնտեսական մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողություն կամ վարքագիծ է համարվում.

1) տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի նկատմամբ խտրական պայմանների սահմանումը և (կամ) կիրառումը,

2) ձեռնարկատիրական գործունեության արգելումը կամ սահմանափակումը, բացառության օրենքով նախատեսված դեպքերի,

3) տնտեսվարող սուբյեկտներին հրահանգներ, հանձնարարություններ, ցուցումներ, խորհուրդներ կամ հրամաններ տալը՝ կապված նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ (ապրանքների, կնքվող գործարքների կամ այլ հարցերի վերաբերյալ), բացառության օրենքով նախատեսված դեպքերի,

4) սպառողների համար պարտականություն նախատեսելը, որով սահմանափակվում է ապրանքների ազատ ընտրության նրանց իրավունքը:

3. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից իր իրավասությունների սահմաններում իրականացված, օրինական նպատակ հետապնդող՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կամ վարքագիծը չպետք է համարվեն հակամրցակցային, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է այդ նպատակի իրագործման՝ տնտեսական մրցակցությունը ավելի պակաս սահմանափակող՝ օրենքով չարգելված այլ միջոց:»:

ՀՈԴՎԱԾ 15. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1. Ուժը կորցրած ճանաչել երրորդ պարբերությունը.

2. Յոթերորդ պարբերության «համագործակցում է» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության,» բառերով, իսկ «միջազգային կազմակերպությունների հետ» բառերից հետո լրացնել «, նրանց հետ կնքում է իր իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ հուշագրեր, համագործակցության մասին այլ համաձայնագրեր, անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքներում ներգրավում է մասնագետներ, փորձագետներ նշված մարմիններից և կազմակերպություններից՝ այդ մարմինների և կազմակերպությունների ղեկավարների գրավոր համաձայնությամբ» բառերով.

3. Նախավերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«- իրականացնում է միջոցառումներ՝ տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի, այդ թվում՝ սույն օրենքի դրույթների մասին հանրությանն իրազեկելու ուղղությամբ.»:

ՀՈԴՎԱԾ 16. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «ա» կետի՝

1) երրորդ պարբերությունից հանել «կամ իրականացնելու կապակցությամբ հետազոտություն,», ինչպես նաև «և (կամ) դիտանցում» բառերը.

2) վեցերորդ պարբերությունում «տնտեսվարող սուբյեկտների» բառերից հետո լրացնել «, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց».

3) յոթերորդ պարբերությունից հանել «կամ տեղական ինքնակառավարման» բառերը, իսկ «ընդունված ակտերի,» բառերից հետո լրացնել «այլ փաստաթղթերի (կազմակերպված մրցույթների վերաբերյալ որոշումների, արձանագրությունների և այլն)՝» բառերով.

4) ութերորդ պարբերությունում «օժանդակությունը» բառից հետո լրացնել «, պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները կամ վարքագիծը» բառերով, իսկ «(լուծելու, դադարեցնելու)» բառերից հետո՝ «ակտերը ոչ իրավաչափ,» բառերով.

5) իններորդ պարբերությունից հանել «և տեղական ինքնակառավարման», ինչպես նաև «վերաբերյալ» բառերը.

6) իններորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով.

«- տնտեսվարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց՝ սույն օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացումներ տալու.

- պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից սույն օրենքի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ, այլ փաստաթղթեր հաստատելու վերաբերյալ.».

2. 1-ին մասի «գ» կետի «օրենքով սահմանված կարգով» և «հետազոտություն» բառերը հանել, իսկ «ուսումնասիրություն» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ հսկիչ գնում)» բառերով:

3. 1-ին մասի «դ» կետից հանել «կամ տեղական ինքնակառավարման» բառերը:

4. 1-ին մասի «ե» կետում «գործողությունները» բառից հետո լրացնել «կամ վարքագիծը» բառերով.

5. 1-ին մասի «զ» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«զ) տալու նախազգուշացում՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու հանձնարարությամբ, նշանակելու տուգանք՝ խախտումները շտկելու և (կամ) հետագայում բացառելու և տուգանքը վճարելու հանձնարարությամբ՝ սահմանելով հանձնարարության կատարման ժամկետ.»:

6. 1-ին մասի «է» կետի «պետական օժանդակության,» բառերից հետո լրացնել «դիտանցումների, հսկիչ գնումների արդյունքում ձեռքբերված ապրանքների տնօրինման» բառերով.

7. 1.2-րդ մասի «հետազոտության,» բառը հանել, իսկ երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն մասով նախատեսված որոշումների ընդունումը տնտեսվարող սուբյեկտներին չի ազատում փաստաթղթեր և այլ տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունից կամ դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու կամ սույն մասով սահմանված լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար սահմանված պատասխանատվությունից:».

8. 1.2-րդ մասից հետո լրացնել նոր 1.3-րդ մասով.

«1.3. էլեկտրոնային հաղորդակցության ապրանքային շուկաների սահմանների և այդ շուկաներում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի առկայության հարցի քննարկման դեպքում Հանձնաժողովը խորհրդակցում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:»:

ՀՈԴՎԱԾ 17. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի `

1. «բ» կետի «բնականոն գործունեությունը,» բառերից հետո լրացնել «այդ նպատակով Հանձնաժողովի անդամներին և իր կողմից նշանակվող աշխատակիցներին տալիս է հանձնարարականներ,» բառերով.

2. «է» կետի «հանդես գալու լիազորագրեր,» բառերից հետո լրացնել «ընդունում է հրամաններ, ներառյալ՝ ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ հսկիչ գնում) կամ դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամաններ,» բառերով:

ՀՈԴՎԱԾ 18. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-րդ կետով.

«3.1) մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների,».

2. 2-րդ մասի 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-րդ կետով.

«3.1) մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը,».

3. լրացնել նոր՝ 3-րդ մասով.

«3. Հանձնաժողովի գործունեության տարեկան ծրագիրը և նախորդ տարվա գործունեության հաշվետվությունը հաստատվում են Հանձնաժողովի որոշմամբ:»:

ՀՈԴՎԱԾ 19. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ՀՈԴՎԱԾ 28. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

1. Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա պետական մարմինները, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

2. Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

3. Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն պահանջելիս Հանձնաժողովը տնտեսվարող սուբյեկտին տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետների, ինչպես նաև սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների վերաբերյալ:

4. Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով պարտավոր են եռամսյա պարբերականությամբ ամսական կտրվածքով Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն ապրանքների մնացորդների, ձեռքբերումների, արտադրության և իրացման ցուցանիշների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ: Տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացվում է մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:»:

ՀՈԴՎԱԾ 20. Օրենքը լրացնել նոր՝ 28.1-րդ հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 28.1. ԴԻՏԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամանում նշվում են դիտանցում իրականացնող մարմնի անվանումը, տնտեսվարող սուբյեկտ(ների) լրիվ անուն(ներ)ը կամ անվանում(ներ)ը, դիտանցումն իրականացնող անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, դիտանցման նպատակը, դիտանցման ժամանակահատվածը և իրավական հիմքերը: Դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամանի պատճենը դիտանցումը սկսելուց առաջ հանձնվում է տնտեսվարող սուբյեկտին կամ տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին (փոխարինող անձին) կամ իրավասու այլ անձի (այսուհետ՝ տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչ): Դիտանցման արդյունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովի ներկայացուցչի պահանջով, վերջինիս կողմից կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է Հանձնաժողովի և տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցչի կողմից: Դիտանցման արդյունքների վերաբերյալ առարկություն ունենալու դեպքում տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ: Տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցչի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու կամ դիտանցման իրականացմանն այլ կերպ

խոչընդոտելու դեպքում այդ մասին արձանագրության մեջ նշում է կատարվում Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից, որում նշվում է նաև դիտանցման իրականացմանը խոչընդոտած տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը:

2. Հանձնաժողովի նախագահի հրամանով դիտանցման կամ ուսումնասիրության (այդ թվում՝ հսկիչ գնման) կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ Հանձնաժողովի նախագահի հրամանով ստուգման իրականացմանը խոչընդոտելը դիտվում է որպես տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովին վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտում և առաջացնում է սույն օրենքով սահմանված պատասխանատվություն:»:

ՀՈԴՎԱԾ 21. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1. 6-րդ մասի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ծանուցված անձանց չներկայանալը չի խոչընդոտում քննարկման անցկացմանը և որոշումների ընդունմանը:»:

2. լրացնել նոր՝ 11-րդ և 12-րդ մասերով.

«11. Հարուցված վարչական վարույթի իրականացման ժամկետի ընթացքը կարող է կասեցվել տնտեսվարող սուբյեկտի, վերջինիս պաշտոնատար անձի կամ իրավասու այլ աշխատակցի բացակայության պատճառով սույն օրենքով նախատեսված թղթակցությունը հանձնելու անհնարինության, Հանձնաժողով փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու կամ վարույթի իրականացմանն այլ կերպ խոչընդոտելու կամ վարչական վարույթի իրականացումն անհնար դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում: Վարչական վարույթը վերսկսվում է սույն մասով սահմանված հանգամանքների վերացումից հետո:

12. Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի ընթացքում սույն օրենքի խախտման փաստ չհայտնաբերվելու դեպքում վարույթը դադարեցվում է Հանձնաժողովի արձանագրային որոշմամբ:»:

ՀՈԴՎԱԾ 22. Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 31. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

2. Պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը:

Հակամրցակցային համաձայնության համար տուգանք նշանակելիս Հանձնաժողովը հաշվի է առնում նաև սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, խառը):

3. Եթե սույն օրենքով նախատեսված է վարչական վարույթի իրականացման, վարչական ակտի ընդունման, ուժի մեջ մտնելու, բողոքարկման կամ հարկադիր կատարման այլ կարգ և ժամկետներ, քան այլ օրենքներով, ապա գործում են սույն օրենքի դրույթները:

4. Սույն օրենքի հնարավոր խախտումների կանխման նպատակով Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալ զգուշացում տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների և (կամ) վարքագծի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը կամ վնասել սպառողների շահերը:»:

ՀՈԴՎԱԾ 23. Օրենքի 34-րդ հոդվածից հանել «իր կողմից անցկացվող հետազոտությունների հիման վրա», ինչպես նաև «և տեղական ինքնակառավարման» բառերը:

ՀՈԴՎԱԾ 24. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և տեղական ինքնակառավարման» բառերը:

ՀՈԴՎԱԾ 25. Օրենքի 36-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 36. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԵՐԸ

1. Սույն օրենքը խախտելու համար տնտեսվարող սուբյեկտները, պետական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

2. Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամ:

Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) միջոցով գների չհիմնավորված բարձրացման հետևանքով տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառելու մասին, եթե տնտեսվարող սուբյեկտը, մինչև տվյալ համաձայնության առնչությամբ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի հարուցումը, օրենքով սահմանված կարգով, իր նախաձեռնությամբ առաջինն է դիմում Հանձնաժողովին և կամովին պարտավորվում դադարեցնել այդ հակամրցակցային համաձայնությանն իր մասնակցությունը և հետագայում բացառել այն՝ միաժամանակ ներկայացնելով տվյալ հակամրցակցային համաձայնությանը վերաբերող այնպիսի ապացույց(ներ), որը (որոնք), ըստ Հանձնաժողովի, հիմք են հանդիսանում տվյալ հակամրցակցային համաձայնության վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու համար: S նտեսվարող սուբյեկտը լիովին ազատվում է հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նախատեսված պատասխանատվությունից, եթե Հանձնաժողովին տրամադրում է հետևյալ ապացույցները.

- դիմողի անվանումը և հասցեն.
- հակամրցակցային համաձայնությանը մասնակցող (մասնակցած) բոլոր տնտեսվարող սուբյեկտների անվանումները և այլ տեղեկություններ.
- հակամրցակցային համաձայնության մանրամասն նկարագրությունը՝ ներառյալ, դրա նպատակը, դրսևորման եղանակը, համաձայնության առարկա հանդիսացող ապրանքը, հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) ամսաթիվը, տևողությունը, վայրը, այլ տվյալներ.
- բոլոր այն անձանց անունները, պաշտոնները, հասցեները, որոնք ներգրավված են, ներգրավված են եղել կամ կարող են ներգրավված լինել հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) գործընթացում.
- հակամրցակցային համաձայնությանն առնչվող՝ դիմողի տրամադրության տակ գտնվող այլ ապացույցներ:

Հանձնաժողով դիմած տնտեսվարող սուբյեկտը չի կարող ազատվել սույն հոդվածով սահմանված պատասխանատվությունից, եթե վերջինիս կողմից չեն կատարվել հետևյալ պայմանները կամ դրանցից որևէ մեկը.

- տնտեսվարող սուբյեկտը դիմումը ներկայացնելու պահից սկսած Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ընթացքում պատշաճ կերպով չի օժանդակում համաձայնության փաստի բացահայտմանը, մասնավորապես, չի ներկայացնում հակամրցակցային համաձայնությանն առնչվող՝ իր տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը (ապացույցները) և (կամ) օպերատիվ կերպով չի տրամադրում դրանք, չի ապահովում իր աշխատակիցներից համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորություն ընձեռելը: Դիմող տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է ձեռնպահ մնալ նաև հակամրցակցային համաձայնությանն առնչվող տեղեկատվության (ապացույցների) ոչնչացումից, կեղծումից, դրանց կամ իր դիմումում առկա տվյալների տարածումից, հրապարակումից՝ մինչև Հանձնաժողովի կողմից որոշման կայացումը կամ Հանձնաժողովի համաձայնությունը և այլն:
- տնտեսվարող սուբյեկտը դիմում ներկայացնելուց անմիջապես հետո չի դադարեցնում իր մասնակցությունը հակամրցակցային համաձայնությանը

Սույն մասի երրորդ պարբերությունում սահմանված դեպքում Հանձնաժողով դիմած տնտեսվարող սուբյեկտի՝ սույն օրենքի խախտմամբ ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամի չափով:

Գների չհիմնավորված բարձրացման միջոցով գերիշխող դիրքի չարաշահմամբ տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4. Սույն օրենքով նախատեսված դեպքում համակենտրոնացումը չհայտարարագրելու կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող տարվա հասույթի մինչև չորս տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ համակենտրոնացմանը մասնակցելուն

նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև չորս տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ:

5. Անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոս: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ տոկոս:

6. Արգելված պետական օժանդակություն ստանալու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոս, բայց ոչ ավելի, քան հարյուր միլիոն դրամ: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև մեկ տոկոս, բայց ոչ ավելի, քան հարյուր միլիոն դրամ:

7. Տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

8. Հանձնաժողովին, Հանձնաժողովի անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև երկու միլիոն դրամ:

9. Տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի որոշմամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չշտկելու, որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:»:

ՀՈԴՎԱԾ 26. Օրենքի 37-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

ՀՈԴՎԱԾ 27. Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում՝

1. «(անգործությամբ)» բառը փոխարինել «կամ վարքագծով» բառերով.
2. հանել «և տեղական ինքնակառավարման» բառերը:

ՀՈԴՎԱԾ 28. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ
«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասինÈ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինÈ, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասինÈ Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասինÈ, ՀԻրավաբանական անձանց պետական գրանցման մասինÈ Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասինÈ, ՀՀայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասինÈ Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասինÈ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինÈ ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հոդված 2-րդ	Կատարել լրացում ,10.ե կետով՝ հետևյալ շարադրմամբ. , 10. ,դիտանցում» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերությամբ. ,մրցակցության սահմանափակում՝ ցանկացած գործողություն, որը տեղական շուկայում նվազեցնում կամ կարող է թուլացնել մրցակցությունը, խեղաթյուրել կամ այլ բացասական ազդեցություն ունենալ մրցակցության վրա։ ե։	Չի ընդունվել, քանի որ մրցակցության սահմանափակման հասկացության նման մեկնաբանումը խճճում է այդ հասկացությունը, քանի որ պարզ չէ, թե ինչ են նշանակում նվազեցնել, թուլացնել կամ խեղաթյուրել մրցակցությունը: Բացի այդ տրամաբանական չէ տալ միայն մրցակցության սահմանափակման հասկացությունը՝ առանց անդրադառնալու մրցակցության կանխմանն ու արգելմանը:

2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 2-րդ հոդված	Կատարել լրացում՝ սահմանելով «խոչընդոտում» հասկացությունը:	Չի ընդունվել, քանի որ ‹Իրավական ակտերի մասինե ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները: «Խոչընդոտում» հասկացությունը միանշանակ է ընկալվում, ուստի այդ հասկացությունը որևէ իրավական ակտում չի մեկնաբանվում: /Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքում բազմիցս օգտագործվում է խոչընդոտում հասկացությունը, բայց չի մեկնաբանվում:/
3.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ս. Սաֆարյան, Լ. Ալավերդյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Բաշխյան, Ջ. Փոստանջյան և Ր. Հովհաննիսյան	Նախագծի 2-րդ հոդված	Սահմանել «շուկայական իշխանություն», «էական մրցակցություն», «շրջանառության ընդհանուր պայմաններ» հասկացությունները	Չի ընդունվել, քանի որ Նախագծով արդեն տրվել են «շուկայական իշխանություն» հասկացությունը բնութագրող սկզբունքները, իսկ «շուկայական իշխանություն», «էական մրցակցություն», «շրջանառության ընդհանուր պայմաններ» և գերիշխող դիրքի առկայության մասին վկայող մի շարք այլ հասկացությունների մանրամասն նկարագրությունն ամրագրվելու է գերիշխող դիրքի որոշման վերաբերյալ Հանձնաժողովի որոշմամբ հաստատված կարգում:
4.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 2-րդ հոդված	«Պետական մարմին» հասկացության մեջ անհրաժեշտ է կոնկրետացնել պետական կամ համայնքի ոչ առևտրային կամ պետության կամ համայնքի մասնակցությամբ կազմակերպություններում պետական /համայնքային/ մասնակցության չափանիշները:	Ընդունվել է, Նախագիծը խմբագրվել է:

5.	Հեղինակ /ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչության միջնորդությամբ/	Նախագծի 2-րդ հոդված	«Տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունում «անհատ ձեռնարկատեր» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատեր, արտոնագրային վճար վճարող» բառերով:	Նախագիծը խմբագրվել է:
6.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	«Տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունում «խումբ» բառից հետո լրացնել Ֆառևտրային ցանցէ բառերով:	Նախագիծը խմբագրվել է:
7.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	«Տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունից հետո լրացնել «առևտրային օբյեկտ», «առևտրային ցանց», «տնտեսական պայմաններ /գործոններ/»«գնի չհիմնավորված բարձրացում», «գնի չհիմնավորված իջեցում», «գնի չհիմնավորված պահպանում» հասկացություններով.	Նախագիծը խմբագրվել է:
8.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	«Անձանց խումբ» հասկացությունը շարադրել նոր խմբագրությամբ:	Նախագիծը խմբագրվել է:
9.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 3-րդ հոդված 1-ին մաս	Կատարել լրացում հետևյալ երկու պարբերություններով, որպես օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերություններ. .Սույն օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություն չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, միասնական գործելակերպը կամ միասնական մեթոդով համագործակցությունը, որը նպաստում է տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին, արտադրության խթանմանը, ապրանքների կատարելագործմանը, ապրանքների բաշխմանը,	Ընդունվել է մասնակի, Նախագիծը խմբագրվել է:

			տեխնիկական և տնտեսական զարգացմանը, ստեղծում պայմաններ սպառողների համար՝ լրացուցիչ եկամուտների ստացման և եկամուտների արդարացի բաշխման նպատակով։ Հակամրցակցային չեն համարվում այն տնտեսվարող սուբյեկտների այնպիսի համաձայնությունները, որոնք ուղղված են արտաքին շուկաներում նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը և որոնց համաձայնության մասնակիցների արտադրված արտադրանքի 40 տոկոսը իրացվում է արտաքին շուկաներում, իսկ ներքին շուկայում համաձայնության ընդհանուր բաժինը տվյալ ապրանքային շուկայում չի գերազանցում 50 տոկոսը։»։	
10.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ	Հանել։	Չի ընդունվել, քանի որ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում հստակ ամրագրված են հակամրցակցային համաձայնությունների նպատակները, ուստի իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, հավելաճի, արտոնությունների կամ առևտրի այլ պայմանների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանն ուղղված գործողությունները կհամարվեն հակամրցակցային համաձայնություն, եթե ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը։

11.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մաս	Հստակեցնել և վերաշարադրել ձևակերպումը, հանել «ունի շուկայական իշխանություն, մասնավորապես» բառերը, ինչպես նաև նշված շարադրման մեջ «հնարավորություն ունի» արտահայտությունից հետո լրացնել «զգալի ժամանակահատված» արտահայտությունը, միաժամանակ նշված մասում կատարել լրացումներ՝ ներմուծելով գերիշխող դիրք համարվելու գնահատման չափանիշները, մասնավորապես՝ գերիշխող դիրք համարվելու չափանիշներ կարող են դիտարկվել, հաշվի առնելով՝ տեղական շուկա մուտք գործելու և դուրս գալու ծախսերը, և տեխնիկական, տնտեսական կամ օրենսդրական պայմանները, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կամ խմբի սեփականության կարգավիճակը, ֆինանսական հզորությունը և շահութաբերությունը, և նրանց զարգացման ուղղվածությունը, տվյալ շուկայի կառուցվածքը, շուկայի համեմատական մասնաբաժինները, շուկայի մասնակիցների գործելակերպը և գերիշխող դիրք համարվող սուբյեկտի կամ սուբյեկտների տնտեսական ազդեցությունը շուկայի զարգացման վրա։	Չի ընդունվել, քանի որ «Շուկայական իշխանության գաղափարը» Նախագծում ներառվել է՝ հաշվի առնելով միջազգային փորձը և այդ հասկացության ընդհանուր բնութագիրը Նախագծով հստակ սահմանված է /Նախագծի 4-րդ հոդված, 2-րդ մաս/: Բացի այդ, «Շուկայական իշխանության գաղափարը» արդեն իր մեջ պարունակում է «զգալի ժամանակահատված» արտահայտություն, քանի որ կոնկրետ պահի որևէ ապրանքային շուկայում հնարավոր չէ ունենալ շուկայական իշխանություն: Այդ մասին է վկայում մրցակցության սահմանափակման արգելման մասին Գերմանիայի օրենքի 19-րդ հոդվածը, որն էլ հիմք է հանդիսացել գերիշխող դիրքի որոշման չափանիշները սահմանելու համար: Ընդ որում միջազգային մրցակցային օրենսդրությունում տրվում է գերիշխող դիրքի ընդհանուր սահմանումը, իսկ չափանիշները մանրամասնեցվում և կոնկրետացվում են ենթաօրենսդրական ակտերում: Ուստի շուկայական իշխանության սահմանման և գերիշխող դիրքի որոշման չափանիշների մանրամասն նկարագրությունը կսահմանվի Հանձնաժողովի համապատասխան կարգով:
12.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ս. Սաֆարյան, Լ. Ալավերդյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Բաշխյան, Զ. Փոստանջյան	Նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասություն	«Շուկայի կառուցվածքի առանձնահատկությունները» արտահայտության հետ կապված ավելացնել նոր նախադասություն՝ «Վերջինս որոշվում անկախ գնահատողների խմբի /ոլորտի առնվազն 6 մասնագետից բաղկացած/ միաձայն եզրակացությամբ»:	Չի ընդունվել, քանի որ հստակ չէ առնվազն 6 մասնագետից բաղկացած գնահատողների խումբ ստեղծելու իրավական հիմքը, նրանց գործունեության բնույթը, նրանց կարգավիճակը, ֆինանսավորումը և այլն: Բացի այդ, եթե

	և Ր. Հովհաննիսյան			գործում է կոլեգիալ մարմին, որոնց անդամներ են նշանակվում ոլորտում փորձառություն և գիտելիքներ ունեցող մասնագետներ, ապա անիմաստ է դառնում նոր կոլեգիալ մարմնի կամ խմբի ձևավորումը: Հարկ է նշել նաև, որ Հանձնաժողովին կից գործում է մրցակցության հարցերով հասարակական խորհուրդ, որտեղ քննարկման են ենթարկվում մրցակցությանն առնչվող հարցեր: Ընդ որում խորհրդում ներկայացված են ներկայացուցիչներ ինչպես պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, այնպես էլ գործարարների շահերը պաշտպանող կազմակերպություններից:
13.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ս. Սաֆարյան, Լ. Ալավերդյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Բաշխյան, Զ. Փոստանջյան և Ր. Հովհաննիսյան/ ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչություն	Նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասություն	Հանել:	Ընդունվել է մասնակի, դրույթը հստակեցվել է:

14.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ. «Տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի որոշման կարգը սահմանում է Հանձնաժողովը, բացառությամբ օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասում նշված տնտեսվարող սուբյեկտների:»	Չի ընդունվել, քանի որ նախ Օրենքը 19-րդ հոդվածի 8-րդ մաս չունի, իսկ եթե բացառությունը վերաբերում է Նախագծի 16-րդ հոդվածի 8-րդ մասին, ապա այդ մոտեցում հիմնավորված և համակարգված չէ: Հանձնաժողովի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորություններն այս առումով հստակ տարանջատված են, որոնցից միայն Հանձնաժողովն է զբաղվում մրցակցության պաշտպանության խնդիրներով:
15.	Հեղինակ	Նախագծի 4-րդ հոդված	Լրացնել նոր 5-րդ մասով. «5. Առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ: »	Նախագիծը խմբագրվել է:
16.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ս. Սաֆարյան, Լ. Ալավերդյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Բաշխյան, Զ. Փոստանջյան և Ռ. Հովհաննիսյան	Նախագծի 4-րդ հոդվածի 7-րդ մաս	Վերջում ավելացնել «միայն եթե տնտեսվարող սուբյեկտի լուծարումը կհանգեցնի շուկայի ապակայունացմանը: Վերջինս որոշվում է անկախ գնահատողների խմբի կողմից /ոլորտ առնվազն 6 մասնագետից բաղկացած/՝ միաձայն եզրակացությամբ»:	Չի ընդունվել, քանի որ լուծարման գործընթացի մանրամասն կարգավորումը ներկայացվել է 0Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին0 Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին0 ՀՀ օրենքի նախագծում, որը ներառված է փաթեթի մեջ, իսկ փորձագետների խմբի ստեղծումը հակասում է լուծարման գործընթացի առաջարկվող մոդելին:
17.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Հանել առաջարկվող ·իր կամ» լրացումը :	Ընդունվել է, Նախագիծը խմբագրվել է:
18.	Հեղինակ	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի Ը» կետում	Նախագիծը խմբագրվել է:

		դդ կետ	«կողմինԝ բառից հետո լրացնել «կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին» բառերով.	
19.	Հեղինակ /ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչության միջնորդությամբ/	Նախագծի 5-դդ հոդվածի 1-ին մասի 3-դդ կետ	«էԝ կետում Ֆհամարԝ բառից հետո լրացնել Ֆկամ որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը կարող էր մուտք չգործել շուկա կամ դուրս մղվել շուկայից կամ կատարել լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համարԝ բառերով.	Նախագիծը խմբագրվել է:
20.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 5-դդ հոդվածի 3-դդ մասի 4-դդ կետ	‚Է»-ն փոխել «թ»-ով:	Ընդունվել է, Նախագիծը խմբագրվել է:
21.	Հեղինակ	Նախագծի 5-դդ հոդված	Լրացնել նոր 4-դդ մասով.	Նախագիծը խմբագրվել է:
22.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 7-դդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Հանել:	Չի ընդունվել, քանի որ համակենտրոնացման շեմերը սահմանելու լիազորությունը Համաշխարհային բանկի փորձագետների առաջարկությամբ Հանձնաժողովին է փոխանցվել՝ հաշվի առնելով ճկունություն ապահովելու անհրաժեշտությունը և ՀՀ տնտեսական պայմաններին համընթաց շարժվելու միտումը: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով համակենտրոնացումների վերահսկման միջոցով ապրանքային շուկաներում կենտրոնացվածության մակարդակը հսկելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է շեմերը սահմանելու իրավասությունը վերապահել Հանձնաժողովին: Ինչ վերաբերում է իրազեկվածության աստիճանի նվազմանը, ապա Հանձնաժողովի բոլոր ակտերը հրապարակվում են պաշտոնական տեղեկագրերում և Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

23.	Հեղինակ /ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչության միջնորդությամբ/	Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մաս	Հանել:	Նախագիծը խմբագրվել է:
24.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ	Հանել:	Չի ընդունվել, քանի որ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, “Հեղինակային իրավունքի մասինՕ ՀՀ օրենքը, ԾԱպրանքային նշանների մասինՕ ՀՀ օրենքը, ԾՖիրմային անվանումների մասինՕ ՀՀ օրենքը չեն կարգավորում մտավոր սեփականությանն առչվող հարաբերություններն անբարեխիղճ մրցակցության դրսևորումների տեսանկյունից, այդ իսկ պատճառով Օրենքում տեղ են գտել նաև ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների, արդյունաբերական նմուշների և մտավոր սեփականության այլ օբյեկտների նմանակման հետ կապված հարաբերություններ կարգավորող նորմեր, ինչպես նաև սահմանվել է պատասխանատվություն անբարեխիղճ մրցակցության համար:
25.	Հեղինակ	Նախագծի 10-րդ հոդված	«(Գովազդման ընթացքում)È բառերից հետո լրացնել «կամ իրացման ընթացքումÈ բառերով:	Նախագիծը խմբագրվել է:
26.	Հեղինակ	Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս	1-ին պարբերությունից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության,» բառերը:	Նախագիծը խմբագրվել է:

27.	Հեղինակ /ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչության միջնորդությամբ/	Նախագծի 14-րդ հոդվածով 2-րդ մասի 3-րդ կետում	Լրացնել ‹Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերով:	Նախագիծը խմբագրվել է:
28.	Հեղինակ /ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչության միջնորդությամբ/	Նախագծի 16-րդ հոդվածի 6-րդ մաս	‹Հսկիչ գնումների» բառերից հետո լրացնել ‹արդյունքում ձեռքբերված ապրանքների տնօրինման» բառերով.	Նախագիծը խմբագրվել է:
29.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 16-րդ հոդվածի 8-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ. ‹1.3. Էլեկտրոնային հաղորդակցության ապրանքային շուկաների (ծառայությունների ընդգրկման շուկա) սահմանների և այդ շուկաներում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի առկայության հարցի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, որը, որոշում կայացնելից առաջ, խորհրդակցում է Հանձնաժողովի հետ»:	Չի ընդունվել, քանի որ նշված դրույթը Նախագծում տեղ է գտել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջարկով և միտված է կանոնակարգելու էլեկտրոնային հաղորդակցության շուկաներում երկու մարմինների իրավասությունները: Ընդ որում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավասությունների մեջ չի մտնում էլեկտրոնային հաղորդակցության շուկաներում տնտեսական մրցակցության պաշտպանության գործառույթը, քանի որ տվյալ մարմինն այդ ոլորտում ունի միայն կարգավորողի լիազորություններ: Բացի այդ առաջարկվող տարբերակն ընդունվելու դեպքում տարբերակված մոտեցում կցուցաբերվի տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, կտուժի գերիշխող դիրքի որոշման ինստիտուտի համակարգային կառուցվածքը:

30.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն	Շարադրել նոր խմբագրությամբ. ‚Դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամանի պատճենը, դիտանցումը սկսելուց առնվազն երեք օր առաջ, հանձնվում է տնտեսվարող սուբյեկտին կամ տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին (փոխարինող անձին) կամ իրավասու այլ անձի (այսուհետ՝ տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչ)։ե:	Չի ընդունվել, քանի որ երեք օր առաջ տնտեսվարող սուբյեկտին դիտանցման մասին ծանուցելու դեպքում դիտանցման իմաստը արժեզրկվում է, քանի որ դիտանցմամբ պետք է պարզվի տնտեսվարող սուբյեկտի գործունեության փաստացի վիճակը: Հակառակ դեպքում, եթե տնտեսվարող սուբյեկտն իմանա իր մոտ իրականացվելիք դիտանցման մասին, ապա հնարավորություն կունենա նախապատրաստվել դրան և անհրաժեշտության դեպքում կոծկել օրենքի հնարավոր խախտումները:
31.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մաս	Հանել:	Ընդունվել է, Նախագիծը խմբագրվել է:
32.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մաս	Հանել:	Չի ընդունվել, քանի որ շահագրգիռ անձանց ծանուցվելու իրավունքը, բացատրություններ, առարկություններ ներկայացնելու և մի շարք այլ իրավունքներ սահմանված են՝Վարչական վարույթի և վարչարարության մասին՝ՀՀ օրենքով:
33.	Հեղինակ	Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մաս	‚Բնույթը,» բառից հետո լրացնել ‚տնողությունը,» բառով:	Նախագիծը խմբագրվել է:
34.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ. ‚3. Սույն օրենքով նախատեսված վարչական վարույթի իրականացման, ինչպես նաև վարչական ակտի ընդունման, ուժի մեջ մտնելու, կատարման, բողոքարկման գործառույթները կարգավորվում են “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին՝ՀՀ օրենքով սահմանված կանոններով:»:	Չի ընդունվել, քանի որ, հիմք ընդունելով "Վարչարարության հիմունքների ¬ վարչական վարույթի մասին" ՀՀ օրենքի /ՎՀՎՎ օրենք/ 2-րդ հոդվածը, հաշվի առնելով տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի առանձնահատկությունները, Օրենքով արդեն իսկ սահմանվել են Հանձնաժողովի

				կողմից իրականացվող վարչական վարույթների առանձնահատկություններ: Մասնավորապես, սահմանվել են հետևյալ առանձնահատկությունները. 1. Օրենքով սահմանվել է առանձնահատկություն վարչական ակտի հարկադիր կատարման հարաբերությունների վերաբերյալ, քանի որ մրցակցության պաշտպանության ոլորտում կիրառելի չեն ՎՀՎՎ-ով սահմանված փոխարինող գործողությունը /ի տարբերություն փոխարինող գործողության՝ Հանձնաժողովի վարչական ակտով նախատեսված պարտականությունը կարող է կատարել միայն ակտում նշված անձը/, ՎՀՎՎ-ով նախատեսված հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նախազգուշացնելը, միայն դատարանի վճռով տուգանք նշանակելը /մրցակցային օրենսդրության խախտումները պետք է վերացվեն և իրավախախտի պատասխանատվությունը պետք է վրա հասնի անհապաղ, հակառակ դեպքում խախտումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների/ 3. Օրենքով սահմանվել է առանձնահատկություն վարչական վարույթի ժամկետի հետ կապված /եթե ՎՀՎՎ-ով ընդհանուր ժամկետը 30 օր է, ապա Օրենքով՝ 90 օր/ և այլն: Հարկ է նշել, որ 0Իրավական ակտերի մասին0 ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասն այստեղ կիրառելի չէ, քանի որ տվյալ նորմով այլ օրենքի նկատմամբ գերակայություն չի սահմանվում:
35.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա	Նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 1-	Շարադրել նոր խմբագրությամբ.	Չի ընդունվել: 1. Միջազգային մրցակցային

	Նռանյան և Արծվիկ Մինասյան	ին պարբերություն	‚Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա տվյալ ապրանքային շուկայում իրականացրած գործունեությունից ստացված հասույթի մինչև հինգ տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ։»։	օրենսդրության գերակշիռ մասում (Ուկրաինա, Ղազախստան, Իսպանիա, Շվեյցարիա և այլն) հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի համար նախատեսվում է պատասխանատվություն տնտեսվարող սուբյեկտի ամբողջ հասույթի որոշակի տոկոսի չափով (ընդհանուր առմամբ 0-10%)՝ անկախ այն հանգամանքից թե տվյալ տնտեսվարող սուբյեկտը որ ապրանքային շուկայում է խախտում թույլ տվել: Դա լիովին արդարացված է, քանի որ իրավախախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու նպատակը ոչ թե տնտեսվարող սուբյեկտի կողմից պատճառված վնասի փոխհատուցումն է, այլ տնտեսվարող սուբյեկտին պատժելն է՝ հետագայում նրա կողմից նման հակաօրինական
36.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ. ‚Գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա տվյալ ապրանքային շուկայում իրականացրած գործունեությունից ստացված հասույթի մինչև հինգ տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ։»։	

37.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագծի 25-րդ հոդվածի 5-րդ մաս	Շարադրել նոր խմբագրությամբ. ‚Անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա տվյալ ապրանքային շուկայում իրականացրած գործունեությունից ստացված հասույթի մինչև 0,1 տոկոս, բայց ոչ ավելի, քան երեք հարյուր հազար դրամ։»։	վարքագիծը կանխելու նպատակով: Իսկ ինչ վերաբերում է այն պնդմանը, որ պատասխանատվության միջոցը պետք է համապատասխանի կատարված արարքին, ապա այդ խնդիրը Նախագծով լուծված է (տես՝ Նախագծի 23-րդ և 26-րդ հոդվածները): 2. Հակամրցակցային համաձայնության առարկա ապրանքային շուկայում ապրանքների իրացումից ստացված հասույթով պատասխանատվություն նշանակելը կարող է առաջացնել մի շարք գործնական խնդիրներ, օրինակ՝ կոնկրետ որևէ ապրանքատեսակի հասույթի հաշվարկի բարդությունը և այդ կապակցությամբ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառվող լրացուցիչ վարչարարությունը:
38.	Հեղինակ	Նախագծի 25-րդ հոդվածի 5-րդ մաս	«Հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի	Նախագիծը խմբագրվել է:

			մինչև հինգ տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամÈ բառերը փոխարինել Ç5 միլիոնից մինչև 200 միլիոն դրամÈ բառերով. Լրացնել ÇՀակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) միջոցով գների չհիմնավորված բարձրացման հետևանքով տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:È պարբերությամբ: «Մասնակցությունը հակամրցակցային համաձայնությանըÈ բառերից հետո լրացնել ÇՍույն մասի երրորդ պարբերությունում սահմանված դեպքում Հանձնաժողով դիմած տնտեսվարող սուբյեկտի՝ սույն օրենքի խախտմամբ ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:È բառերով:	
39.	Հեղինակ	Նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մաս	«Տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև հինգ տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամÈ բառերը փոխարինել Ç5 միլիոնից մինչև 200 միլիոն դրամÈ բառերով.	Նախագիծը խմբագրվել է:

			Լրացնել ՀԳների չհիմնավորված բարձրացման միջոցով գերիշխող դիրքի չարաշահմամբ տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:Ė պարբերությամբ:	
40.	Հեղինակ	Նախագծի 25-րդ հոդվածի 5-րդ մաս	,0,1 տոկոս, բայց ոչ ավելի, քան երեք հարյուր հազար դրամ» բառերը փոխարինել ,1 տոկոս» բառերով:	Նախագիծը խմբագրվել է:
41.	Հեղինակ /ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերլուծական վարչության միջնորդությամբ/	Նախագծի 28-րդ հոդված	Հանել:	Նախագիծը խմբագրվել է:
42.	Հեղինակ	«Հայաստանի Հանրապետությունում ստոգումների կազմակերպման և անցկացման մասինĖ Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասինĖ ՀՀ օրենքի նախագծի հոդված 3-րդ հոդված, 2-րդ և 3-րդ պարբերություններ	Հանել:	Նախագիծը խմբագրվել է:
43.	Հեղինակ	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ	Հանել:	Նախագիծը հանվել է:

		կատարելու մասինÈ ՀՀ օրենքի նախագիծ		
44.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագիծ	Սահմանել Հանձնաժողովի լիազորությունն ու պատասխանատվությունը հակագնագցման /անտիդեմպինգ/ քաղաքականության իրականացման մասով:	Չի ընդունվել, քանի որ նշված հարցը դուրս է Նախագծի կարգավորման շրջանակներից: Այդ կապակցությամբ նախ պետք է ուժը կորցրած ճանաչվի ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի ÔԼիազոր մարմին ճանաչելու մասինÓ թիվ 1632-Ն որոշումը: Բացի այդ հակագնագցման քաղաքականությունն ուղղակիորեն չի վերաբերում մրցակցության խնդիրներին, այլ վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տնտեսության ճյուղերին վնաս հասցնող ապրանքների ներմուծմանը:
45.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագիծ	Նախագծում ներառել դրույթ, որի համաձայն անբարեխիղճ մրցակցության վարույթը Հանձնաժողովի կողմից պետք է իրականացվի վարքագիծը դատական ակտով հակահիրավական հաստատված լինելու դեպքում և այն մասով, որը հանգեցրել է մրցակցային վիճակի վատթարացմանը:	Չի ընդունվել, քանի որ առաջարկը հակասում է Հայաստանի Հանրապետության վարչական և դատական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերին: Եթե կա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով հաստատվել է ակտի հակահիրավական բնույթը, ապա այլևս որևէ իմաստ չունի վարույթ իրականացնել: Բացի այդ, հասկանալի չէ, թե ով պետք է դիմի դատարան, ինչ հայցով, քննարկման արդյունքում դատարանը ինչ որոշում պետք է կայացնի, ինչպես է լուծվելու տուգանքի հարցը և այլն:

46.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան և Արծվիկ Մինասյան	Նախագիծ	Ամրագրել դրույթներ, որոնց համաձայն յուրաքանչյուր տարի Հանձնաժողովն իր տարեկան գործունեության ծրագրում և նախորդ տարվա հաշվետվության մեջ պետք է ներկայացնի տնտեսության մրցակցային վիճակի և գնաճի ու սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ իրավիճակն ու խնդիրները, ինչպես նաև ՀՀ ԿԲ, ՀՀ կառավարության և այլ պետական մարմինների կողմից ձեռնարկման ենթակա գործողություններն ու դրանց ազդեցությունը հիշյալ խնդիրների լուծման մասով:	Ընդունվել է, Նախագիծը խմբագրվել է: